

Հայ ժողովրդի պատմության Ժամանակագրություն

1861 հունվար 10 Ախթալայում պղնձա-
ծոլական գործարան է հիմնվում:

փետրվար 19 Ալեքսանդր II-ի
մանկիցները ճորտատիրական իրավունքի վերացման
մասին:

ապրիլ 20 Փարիզում իրատարակվում
է Ս. Նալբանդյանի «Երկու տող» պամֆլետը:

հունիս 19 Ծնվեց նորվեգացի
նշանավոր ճանապարհորդ և քաղաքական գործիչ
Ֆրիդրիխ Նանսենը: Նա վախճանվեց 1930թ.-ին Թուրք
ունիագործների կողմից հարուցած հայկական
ցեղասպանությունից փրկված առիվ մարդկանց
օգնելուց հետո: Նա ստեղծեց «Նանսենի անձնագիր»
այն փախստականների համար, ովքեր չունեին
պետության պատկանելության որևէ փաստաթուրը:

հունիս 26 Կ. Պոլսում ծնվեց
ականավոր գորոդ և քաղաքական գործիչ Գրիգոր
Չոհրապը (թուրք Զարդարների կողմից սպանվեց 1915
թ. հունիսի 7-ին):

հուլիս 1 Զնյութնիայում, Գր. Չիլինի կիրյանի
և Ա. Յակունու խմբագրությամբ սկսում է լուս տեսնել
«Ծաղիկ» տասնօրյա հանդեսը, որը 1865 թ.

տեղափոխվում է Կ. Պոլսի: Խմբագիրներ են
դառնում Զարեհ Ստեփանյանը, ապա՝ Ս. Մանուրյանը:

օգոստոս 10 Մոսկվայում Մսեր և
Զարմայր Մսերյանները սկսում են իրատարակել
«Յանքավաբեր Ռուսիո» կիսամյայ պարբերականը:

սեպտեմբեր 1 Կ. Պոլսում Գ. Երանյանի, Ն.
Թաշճյանի և Տ. Չուխաջյանի խմբագրությամբ սկսում է
իրատարակել «Քնար հայկական» երաժշտական
կիսամյա հանդեսը:

հոկտեմբեր 8 Յայկական Օրիորդաց
ուսումնարանի բացումը Նոր Նախիջևանում:

1861 նոյեմբեր 17 Կախճանվեց բանասեր
Գևորգ Յախվերյանը: (Ծնվ. 1818թ.-ին):

հեկտեմբեր 14 Կ. Պոլսում հիմնվում է
Արևելյան թատրոնը: Բացման առիվ ճառ է ասում
Միք. Նալբանդյանը:

1862 փետրվար 20 Վաճի գինված ելույթը
թուրքական կառավարության դեմ:

հունիս 27 Ազիզ փաշայի բանակը
դուրս է գալիս Մարաշից և շարժվում Զեյթունի վրա:

հուլիս 14 Նոր Նախիջևանում
ոստիկանությունը ճերբակալում է Ս. Նալբանդյանին:
Հունիսի 27-ին, ոստիկանության հսկողությամբ, նա
փոխադրվում է Պետերովուդ և բանտարկվում
Պետրոպավլովյան բերդում:

հուլիս 24 Կ. Պոլսից Յաճըն մեկնեց
Եղիա Տնտեսյանը, որը կապեր հաստատեց ապստամ
գերունցիների հետ:

օգոստոս 1 Կ. Պոլսում տեղի է ունենում
հայ աշխատավորության ցույցը, որի մասնակիցները
սուլթանից պահանջում էին վավերացնել Ազգային

սահմանադրությունը:

օգոստոս 2 Զեյթունի հերոսական

ապստամբությունը:

1863 հունվար 10 Կ. Պոլսում, Ստեփան
Փափազյանի խմբագրությամբ սկսում է լուս տեսնել
«Ժամանակ» կիսամյա հանդեսը:

մարտ 17 Սուլթանական կառավա-
րությունը հաստատում է արևմտահայերի Ազգային
սահմանադրության կրօնակած տարբերակը:

ապրիլ 1 Մշո ս. Կարապետի
վանքում Գարեգին Սրբանձույանցի խմբագրությամբ
հրատարակվում է «Արծվիկ Տարոնո» պարբերականը.
Լուս է տեսել 43 համար:

հոկտեմբեր 21 Յումից Կ. Պոլսի հայերին
Յայաստանի ազատագրությամբ վերաբերյալ ծրագիր-
նամակն է ուղարկում Պ. Նորատունելյանը:

դեկտեմբեր 6 Մարաշ ուղարկուեց
Եվրոպացիների և հայերի մասնակցությամբ կազմված
Զեյթունի գործը քննող հանձնախումբը:

1864 հունվար 8 Ալեքսանդրապոլում ծնվեց
ազգագրագետ Երվանդ Լալայանը: (Վախճ. 1931թ.-ին):

հունվար 21 Յեռախոսային կապ է
հաստատվում Երևանի և Թիֆլիսի միջև:

ապրիլ 14 Ծնվեց տաղանդավոր
բանաստեղծ Յովհաննես Յովհաննիսյանը: (Վախճ. 1929թ.-ին):

մայիս 21 «Յայոց մարդասիրական
ընկերության» հիմնումը Բաքվում:

մայիս 22 Թուրքական գորքերը
արշավում են Սասունի վրա, սակայն հանդիպելով
հայկական ուժերի դիմադրությանը, նահանջում են:

սեպտեմբեր 28 Առաջին ինտերնացիոնալի
հիմնադրումը:

հոկտեմբեր 20 Թուրքիան, այդ թվում և
Արևոտյան Յայաստանը, վարչական նոր բաժանման է
ենթարկվում:

դեկտեմբեր 10 Սենատի դատավճռով Ս.
Նալբանդյանը աքսորվում է Կամիշին:

դեկտեմբեր 25 Ծնվեց արևելագետ,
հնաբան, լեզվաբան Նիկոլայոս Մաոր: (Վախճ. 1934թ.-
ին):

1865 փետրվար 4 Ծնվեց երաժշտագետ
Վասիլի Ղորջանյանը: (Վախճ. 1934թ.-ին):

փետրվար 25 Ծնվեց հայ ազգային-
ազատագրական շարժման գործիչ և գորավար
Անդրանիկ Օզանյանը: (Վախճ. 1927թ.-ին):

մարտ 17 Նախիջևանի Աստապատ
գյուղում ծնվեց Մանուկ Աբեյյանը: (Վախճ. 1944թ.-
ին):

օգոստոս 29 Կ. Պոլսում վախճանվեց
Կարապետ Շահնազարյանը: (Ծնվ. 1814թ.-ին):

հոկտեմբեր 20 Յայկական թատրոնի
հիմնումը Երևանում:

հոկտեմբեր 23 Ծնվեց հայ դերասան
Յովհաննես Աբեյյանը: (Վախճ. 1936թ.-ին):

դեկտեմբեր 29 Ծնվեց հայ նկարիչ Փանոս
Թերլեմեզյանը: (Վախճ. 1941թ.-ին):

(Ծարունակելի)

Լուրեր

Իրանահայ համայնք

Տեղի ունեցան Թեհրանի հայոց թեմի 13-րդ շրջանի Պատգամատրական ժողովի ընտրությունները:

2004թ նոյ. 19-ին, կայացան Թեհրանի հայոց թեմի (Թեհրան, Գորգան, Սարի, Արաք, Քերմանշահ, Անգալի, Ռաշտ և Ղազվին) 13-րդ շրջանի Պատգամապետրական ժողովի ընտրությունները:

Ընտրությունների Կենտրոն ընտրական հանձնախմբի կողմից հրապարակված ցանկը պարզում է հետեւյալ արդյունքը.



1-Թեհրան

Ա. Սարգիս Եկեղեցու շրջան

- 1- Երևան Ղալթյան 935
- 2- Միշա Ջայրապետյան 913
- 3- Արա Շահնազարյան 746
- 4- Թալին Կարապետյան 716
- 5- Լիդա Միրզա Ազոյան 715
- 6- Թովման Թովմասյան 709
- 7- Վահիկ Շահնազարյան 703
- 8- Ուլիբիկ Կարապետյան 659
- 9- Ջարություն Եղնազարյան 653
- 10- Էդվարդ Բարախանյան 639
- 11- Էդիկ Ղահրանանյան 627
- 12- Ռայմոնդ Գրիգոր Խաչատրյան 556
- 13- Վրեժ Օհանյան 550

Ա. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցու շրջան (Զեյթուն)

- 1- Ալբերտ Թոշարյան 775
- 2- Աշոտ Սինանի 690
- 3- Վահե Խաչատրյան 625
- 4- Ջրանտ Քեշիշյան Մասիհի 607
- 5- Էլիսու Մասիհի 605
- 6- Վալորդ Ջախինյան 586
- 7- Էդիկ Շահբազյան 586
- 8- Ֆլորանս Խաչավյան 418
- 9- Գառնիկ Սարգսյան 395

Ա. Աստվածածին Եկեղեցու շրջան

- 1 - Սվետ Դանիել Նախջեւանքափէ 123
- 2 - Գեղրդ Բարա Մելիք-Կարապետյան 122
- 3 - Հովհան Միրզախանյան 120

Ա. Վարդանանց Եկեղեցու շրջան (Սարդարապատ)

- 1 - Ռազմիկ Աբրի 193
- 2 - Հրաչյանի Եսիհա Մասիհի 165
- 3 - Ժոնես Գրիգորյան 137

Ա. Թարգմանչաց Եկեղեցու շրջան (Սասուն)

- 1 - Ռուբեն Սարդարի Մասիհի 1232
- 2 - Գեղրդ Մասիհի Աբովլեան 1103
- 3 - Հերիքնազ Բարախանլու 1063
- 4 - Պետրոս Աբգարյան 927
- 5 - Երվանդ Զանանի 924
- 6 - Արմեն Ջայրապետյան 919
- 7 - Արմինե Ղազարյան 916
- 8 - Ջարության Ղորղենի 880
- 9 - Ռայմոնդ Թորոսյան 862
- 10 - Ջայկ Թահմազյան 854
- 11 - Ռոստոմ Ջովսեփյան Լենգերդի 831
- 12 - Ալֆրեդ Անթանեսյան 814
- 13 - Վահե Աղազարյան 813

2-Այլ քաղաքներ

Գորգան

Մերուժան Չոլաքյան 54

Սարի

Ավանես Ղարա Մաթոսյան 36

Արար

- 1 - Արդարատ Քեշիշյան
- 2 - Արման Մեջլումյան Գումար 168

Քերմանշահ

Շահեն Մարգարյան 14

Անգալի

Արտեմ Ղովլաքյան 38

Ռաշտ

Իշխանուիկ Սահակյան 17

Ղազվին


Ռոմիկ Թարոյան 19

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁԱԽՈՒՄԲԸ ՔՆՆԱՐԿԵԼ Է
ԹԵՇՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՍԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋՈՒԹՅԱՄԱ
ԱՏԱՅՎԱԾ ԲՈՂՈՁՆԵՐԸ

ԹԵՇՐԱՆ, 2 ԴԵԿԵMBERԻ ԹԵՄԻ Հայոց թեմի 13-րդ Պատգամավորական ժողովի ընտրությունների Կենտրոնական ընտրական հանձնախումբը դեկտեմբերի 1-ի նիստում քննարկել է ընտրությունների կապակցությամբ ստացված բողոքները: Վերահաշվարկվել են Սասուն քաղաքամասի ընտրված թեկնածու Երվանդ Զամանի «Յ. Թովմասյան» դպրոցի քվեաթերթիկները, արդյունքում քվեարկության արդյունքները մնացել են անփոփոխ: Վերահաշվարկվել են Սասուն քաղաքամասի ընտրված թեկնածու Վահե Բարյայն Աղաղամինի եւ ընտրված թեկնածու Վահե Աղազարյանի օգտին տրված քվեարթերթիկները: Արդյունքում պատկերը փոխվել է. Վահե Բարյայն Աղաղամին 802 քվեով տեղ է գրավել ընտրված պատգամավորների շարքում, իսկ Վահե Աղազարյանը 785 քվեով գրավել է 16-րդ տեղը: Մերժվել է Սասուն քաղաքամասի ընտրված թեկնածու Ալվարդ Այրիմյանի պահանջը քաղաքամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկնան մասին: Նոյն թեկնածուի բողոքի երկրորդ կետում նշված՝ քաղաքամասի ընտրված երկու թեկնածուների նոյն քաղաքամասում չընակվելու հանգամանքը քննարկվել է, ապա որոշվել է հարցը ներկայացնել պաշտոնական եւ իրավասու մարմինների ուշադրությանը: Եթե պարզվի, որ հիշյալ թեկնածուները Սասուն քաղաքամասի բնակիչներ չեն, ապա նրանք իրենց տեղը կզիշեն հաջորդ երկու տեղերը գրաված թեկնածուներին: Ամբողջ Թեհրանում ընտրությունները չեղալ համարելու պահանջով Սասուն քաղաքամասի ընտրված թեկնածուներ Ռ. Թորոսյանի, Պ. Արգարյանի, Ռ. Սարդարյանի, Յ. Քեշիշյանի, Յ. Թահմաջյանի բողոքը հանձնաժողովը մերժել է՝ որեւէ հիմք չգտնելով, նաեւ նյութ բոլոր շոշաններից ընտրության ընթացքի եւ արդյունքի առնչությամբ որեւէ բողոք չստանալով:

**Կյանքին իրաժեշտ տվեց
Ռ. Բենը**

2004 թ. նոյեմբերի 14, Թեհրանում մահացել է արձակագիր, բանաստեղծ-ճարտարապետ, «Նոր Էջ» գրական խմբակցության անդամ Ռ. Բենը (Ուրբեն Յովսեփի Յովհաննիսյան):



**Գնահատագիր՝
պրն. Լեւոն Գ.
Մինասյանին**

Վերջին տարիների ընթացքում Նոր Զուղայում իրանակայ վաստակավոր բանասեր պրն. Լ. Գ. Մինասյանին Սպահանի պետական-մշակութային հաստատությունների կողմից շնորհվել են բազմաթիվ գնահատական եւ շնորհակալական գրեր՝ առ ի դրվատում իր մատուցած մշակութային ու բանասիրական ուսումնասիրությունների: Ուրախալի է, որ այդ շարքում



Վերջերս ռադիո-հեռուստատեսության Սպահանի կենտրոնի կողմից նոյս կենտրոնի ընդհանուր տնօրեն պրն. Ալի Քեալբասիի ստորագրությամբ պրն. Լ. Մինասյանին շնորհվել է մի գնահատագիր՝ անցյալ տարում (իրանական 1382 թվականին) կայացած «Սպահան՝ համաձայն պատմության» գիտաժողով-հեռուստածրագրին մատուցած իր համագործակցության համար:

Իրան

Իրանը զինվել է ռազմավարական
նշանակության հրթիռներով

Իրանի ռադիոն, վկայակոչելով իսլամական Հանրապետության պաշտպանության նախարարին, հայտնել է, որ զինվրականներին հաջողվել է հաջողությամբ անցկացնել «ռազմավարական հրթիռի» փորձարկումները, եւ նոր զենքն արդեն գտնվում է սպառազինության մեջ:

Նախարարի ասելով՝ «ռազմավարական հրթիռը հաջողությամբ արձակվել է Հեղափոխական զվարդիայի զրավարժությունների ժամանակ»: Նա հրաժարվել է ճշտել, թե հատկապես ինչ «ռազմավարական հրթիռի» մասին է խոսքը:

Պետական ռադիոն հիշեցրել է «մեծ հեռահարության հրթիռի» մասին: Անհասկանալի է, թե խոսքն արդյոք «Շահար-3» հրթիռի նոր տարբերակի մասին է, թե այլ դասի զենքի, հաղորդում է իսրայելական «Շաարեցը»: Թերթի համաձայն՝ անցյալ ամիս իրանի պաշտպանության նախարարությունը հաղորդել է, որ կատարվել են միջին հեռահարության «Շահար-3» բալիստիկ հրթիռի դաշտային զրավարժություններ, որն ընդունակ է թիրախներ խոցել իսրայելի տարածքում, ինչպես նաև Պարսից ծոցի ամերիկյան ռազմահանգըներում:

Հայաստան ՍԵՐԳԵՅ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ



2004թ. Նոյեմբերի 23-ի առավոտյան, Հանրապետական հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունքում վախճանվեց մեր ժամանակների խոշոր սեյսմոլոգներից մեկը՝ պրոֆ. Սերգեյ Բալասանյանը: Նա հիվանդանոց էր տեղափոխվել նոյեմբերի 19-ին: Նոյեն օրը Աշտարակի խճուղու վրա, Գյումրիում դասախոսություն կարդալուց հետո, վերադարձի ժամանակին, չպազգած հանգամանքներում ենթարկվել էր ավտովթարի, որի մասին մեր թերթը գրել էր երեկով համարում: Դեռ շատ կգրվի այս խոշոր գիտնականի մասին, որի վաստակը մեծ է ոչ միայն հայկական, այլև համաշխարհային սեյսմոլոգիայի ասպարեզում: Մինչ այդ, ստորեւ ներկայացնում են

տարաբախս գիտնականի կենսագրությունից հակիրճ տվյալներ:

Սերգեյ Յուրիի Բալասանյանը ծնվել է 1948 թ. օգոստոսի 16-ին, Բաքվում, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, բանաստեղծ պրոլյու Բալասանի (Յուրի Բալասանյանի) եւ պատմաբան Սոֆյա Տեղ-Յովակինովայի ընտանիքում: Նոյն թվականին Բալասանյանների ընտանիքը տեղափոխվել է Երեւան:

Ավարտելով Երեւանի 71 միջնակարգ դպրոցը, Ս. Բալասանյանը 1967 թ. ընդունվել եւ 1973 թ. պարտել է Երեւանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետի երկրաֆիզիկայի բաժանմունքը:

Համալսարանը պարտելուց հետո Ս. Բալասանյանը երկու տարում, ավարտել է Երեւանի պետական համալսարանի ասպիրանտուրան, ստանալով 1975 թ. երկրաբանա-հանքարանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Պաշտպանությունից հետո նա հրավիրվել է աշխատելու գլխավոր երկրաֆիզիկոսի պաշտոնում ՀՍՍՀ նախարարների խորհրդին առընթեր Գունավոր մետաղուրգիայի վարչության երկրաբանահետախուզական արտադրական տրեստում:

1976 թ. Ս. Բալասանյանը հրավիրվել է աշխատանքի Անդրայկալի Համալիր գիտահետազոտական կենտրոնում եւ միաժմանակ Զիտայի պոլիտեխնիկական ինստիտուտում, որտեղ նա ստեղծել է երկրաֆիզիկայի ամբիոն եւ ընտրվել է այդ ամբիոնի առաջին վարիչ, պատրաստելով երկրաֆիզիկոսներ Սիրիոյի եւ Ներավոր Արեւելքի համար: Միաժմանակ, Ս. Բալասանյանը հիմնել է հատուկ կոնսորտիումորական բյուրո եւ մշտական գործող երկրաֆիզիկական արշավախումբ, որի ստորաբաժնումները կատարում էին հատուկ գիտահետազոտական աշխատանքներ աճրող խորհրդային Սիրության տարածքում:

1987 թ. Մոսկվայում Ս. Բալասանյանը պաշտպանեց տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական թեզը, որը ԽՍՀՄ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈԴ) կողմից ճանաչվեց որպես նոր գիտական ուղղություն՝ Դինամիկ եւ ոչ գծային երկրաֆիզիկա: Նոյն թվականին նախագիծը արժանացավ Հայաստանի քաղաքական ղեկավարության հավանությանը, որից հետո ՀՀ վարչապետի հրավերով պրոֆ. Ս. Բալասանյանը համաձայնեց աշխատել Հայաստանում, ստանձնելով ՀՀ կառավարության առներ ՍՊԱԾ-ի պետի պաշտոնը:

1991 թ., Սպիտակի 1988 թ. ավերիչ երկրաշարժից հետո, ունենալով կազմակերպչական մեծ փորձ եւ խորը մասնագիտական գիտելիքներ, պրոֆ. Ս. Բալասանյանը մշակել է ներկայացրել է ՀՀ գերազանց խորհրդին ու ՀՀ նախարարների խորհրդին ՀՀ կառավարության առներ Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության (ՀՍՍՀ ՍՊԱԾ) ստեղծման գաղափարը եւ նախագիծը: Նոյն թվականին նախագիծը արժանացավ Հայաստանի քաղաքական ղեկավարության հավանությանը, որից հետո ՀՀ վարչապետի հրավերով պրոֆ. Ս. Բալասանյանը համաձայնեց աշխատել Հայաստանում, ստանձնելով ՀՀ կառավարության առներ ՍՊԱԾ-ի պետի պաշտոնը:

1991 -2002 թթ. պրոֆ. Ս. Բալասանյանը ստեղծեց Հայաստանի սեյսմիկ պաշտպանության համակարգը՝ կառավարվող ՀՀ ՍՊԱԾ-ի կողմից, որը 1998 թ. արժանացավ ՍԱԿ-ի՝ Հայկական կառավարման մարմնի համար աննախադեպ գնահատականի՝ ՍԱԿ-Սասակավայի համաշխարհային նոցանակի Եվրոպայի հաղթող եւ ճանաչվեց աշխարհում երկրորդը: Նոյն տարիներին պրոֆ. Ս. Բալասանյանը մշակել է երկու երկրաժամկետ ռազմավարական պետական համալիր ծրագրեր՝ կապված Հայաստանում եւ Երեւան քաղաքում

Հոգու Արևարտագովք

սեյսմիկ ռիսկի նվազեցման հիմնահարցերի հետ, որոնք 1999 թ. հաստատվել են ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով, ինչպես նաև նախաձեռնել եւ մշակել է ՀՀ սեյսմիկ պաշտպանության մասին մայր օրենքի նախագիծը, որը 2002 թ. ընդունվեց ՀՀ Ազգային ժողովի կողմից:

1991 թ. պրոֆ. Ս. Բալասանյանը ստեղծեց Հայաստանի սեյսմիկ պաշտպանության ֆոնդ (ՀՍՊՖ), իսկ 1998 թ. Հայկական սեյսմոլոգիական եւ երկրի ֆիզիկայի ընկերակցություն (ՀՍԵՖԸ) հասարակական կազմակերպությունները:

Պրոֆ. Ս. Բալասանյանը Ասիական սեյսմոլոգիական հանձնաժողովի նախագահն էր, որը միավորում է 24 անդամ երկրներ նախոնիայից մինչեւ Եգիպտոս, Եվրոպայի սեյսմոլոգիական հանձնաժողովի անդամ, Եվրոպայի խորհրդին առընթեր երկրաշրթերի կանխատեսման հանձնաժողովի անդամ: Նա ռեգիստրացիայի սեյսմիկ պաշտպանության գաղափարի հիմնադիրն է, որը իրագործվում է մեր տարածաշրջանում 1991 թ-ից:

Պրոֆ. Ս. Բալասանյանը երկրաֆիզիկայի եւ սեյսմոլոգիայի բնագավառներում հեղինակ է ավելի քան 180 գիտական հրապարակումների, 4 մենագրության, 10 գյուտերի, որոնք լուս են տեսել Ռուսաստանում, Հայաստանում, ԱՄՆ-ում, Չոլանդիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Չունաստանում, ճապոնիայում, Չինաստանում եւ այլ երկրներում: Նա դեկավարել է ավելի քան 50 միջազգային եւ ազգային ծրագրեր, կազմակերպել է տասնյակից ավելի միջազգային համաժողովներ, կոնֆերանսներ, սեմինարներ:

1991 թ. նա պատրաստում է բարձրորակ կադրեր երկրաֆիզիկայի եւ սեյսմոլոգիայի բնագավառներում:

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՆՉՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ «ԱԴԱՍԱՆԴԱԿՈՒՌ ԱՐԱՐԱՏ» ԸՆԴՀԱՆՈՒՐ

ԷԶՄԻԱԾԻՆ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՍ: Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը նոյեմբերի 26-ին Սայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունել է Հայաստանի Թեքեյան Մշակութային միության կենտրոնական վարչության անդամներին՝ առաջնորդությամբ միության նախագահ Ռուբեն Միրզախանյանի:

Շնորհավորելով Վեհափառ հայրապետին գահակալության 5-րդ տարեդարձի առիթով, Ռ. Միրզախանյանը անդրադարձել է Նորին սրբության եկեղեցաշեն ու ազգանվեր գործունեությանը եւ շեշտել եկեղեցաշինության, մատաղ սերնդի քրիստոնեական դաստիարակության, ժամանակին հանահունչ հոգեւորականների նոր սերնդի պատրաստությանն ուղղված Հայոց Հայրապետի ջանքերի կարեւորությունը: Ինչպես «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՍ»-ին հայտնեցին Սայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգից, ի գնահատություն Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ազգային-մշակության գործունեության եւ հնգամյա արգասարեր գործունեության՝ Ռ. Միրզախանյանը Հայոց հայրապետին է հանձնել Թեքեյան Մշակութային միության բարձրագույն ադամանդակութ «Արարատ» շքանշանը:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀՐԱՍՏԱՆԱԳԻՐ Է ՍՏՈՐԱԳՐԵԼ ՀՀ ԱԺ ՆԱԽԱԳԱՀԸ ՊԱՏՎՈ ԼԵԳԵՈՆԻ ԸՔԱՆԾԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՍ: Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը ստորագրել է հրամանագիր ՀՀ ԱԺ նախագահ, «Օրինաց երկիր» կուսակցության ղեկավար Արթուր Բաղդասարյանին Պատվո լեգեոնի շքանշանով պարգևեատրելու մասին: Այս Ա. Բաղդասարյանին առաջիկայում հանձնելու հարցը արդեն գուտ տեխնիկական է: Այս մասին նոյեմբերի 30-ի ասուլիսում հայտնեց ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ, «Օրինաց երկիր» կուսակցության փոխնախագահ Միեր Շահգելյանը: Ըստ նրա, այդ պատվին ԱԺ նախագահն արժանացել է հայելու պարագաների ամրապնդման գործում ունեցած ներդրման:

Ասուլիսի հիմնական թեման Ժակ Շիրակի ղեկավարած «Միավորում» հանուն ժողովրդարական շարժման (UMP) կուսակցության նոյեմբերի 28-ի համագումարն էր, որին «Օրինաց երկիր»-ի կողմից նասնակցել է Միեր Շահգելյանը: Նրա գնահատմամբ, համագումարը «համաելուսական նշանակություն ունեցող խիստ կարեւոր իրադարձություն էր», որին մասնակցել են 40 հազար պատվիրակներ: Ներկայացված էին շուրջ 60 երկրների կուսակցություններ, պետական եւ քաղաքական գործիչներ: Բացի «Օրինաց երկիր»-ից Հայաստանից հրավիրված էր նաև ՀՀ-ն, որը ներկայացնում էր կուսակցության վարչության անդամ Դավիթ:

Համագումարին անձամբ ներկա չի եղել Ժակ Շիրակը, քանի որ համագումարին նախորդած օրերին նա Բուրկինա Ֆասոյի նայրաքաղաքում մասնակցում էր Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովին: Փարիզում ընթերցվել է Ֆրանսիայի նախագահի ուղերձը: Համագումարի աշխատանքներին մասնակցել են Ֆրանսիայի առաջին տիկինը, Վարչապետը եւ այլ բարձրաստիճան պաշտոնյաներ: Ըստ Շահգելյանի, կարեւոր էր այն փաստը, որ համագումարը մեկտեղել էր կենտրոնամետ, ժողովրդակարական քաղաքական ուժերի: Ըստ նրա, «Օրինաց երկիր»-ի նկատմամբ կար մեծ հետաքրքրություն եւ համագործակցության ցանկություն՝ որպես եվրոպական ուղղվածության եւ ազատական մկրտչներին դավանող քաղաքական ուժի: Կարեւոր է նաև Արթուր Բաղդասարյանի դերը երկրի օրենսդրության շրջանակում եվրոպական մկրտչների արմատավորման, Հարավային Հովկասում կայունության պահպանման ուղղված միջոցառումներին հարցում:

Բանախոսը կարեւոր է նաև Փարիզում գտնվելու 2-3 օրերին կայացած իր բազմաթիվ համովակումները ինչպես Ֆրանսիայի, այնպես էլ ազդեցիկ եվրոպական մի շարք պաշտոնյաների հետ: Բնարկումների հիմնական թեման Հայաստան-Եվրոպա համագործակցությունն էր, Հայաստանում ժողովրդակարագության զարգացման հեռանկարները: Ըստ նրա, նման շփումները կարող են նպաստել եվրոպական կառույցներում Հայաստանի

Հոյս Կիելարաբարերք

ազգային շահերի պաշտպանությանը:
Այցի ընթացքում ծեղք են բերվել մի շարք գործնական պայմանավորվածություններ, մասնավորապես «Օրինա Երկիր» կուսակցության անդամների վերապատրաստման, կուսակցությունների փոխայցելությունների, տարրեր իիմնադրամների ներկայացուցիչների առաջիկայում Հայաստան կատարելիք այցերի մասին:

Արցախ

ԱՆՀՐԱԺԵԾ 12,5 ՄԼՆ
ԴՈԼԱՐԸ ՀԱՆԳԱԿՎԵՑ
*Հոյս-Սիմոնից՝ 2 մլն, Քըրք Քըրքորյանից
եւ Էղուարդ Էռնելյանից՝ 1,5-ական,
Հրայր եւ Գեւորգ Հովհաններից ու
Սարգիս Հակոբյանից՝ 1-ական*

Լու Անջելեսում նոյեմբերի 25-ին «Հայաստան» համահայկական իիմնադրամի ազգային տուրքի հերթական մարաքոնի ընթացքում հանգանակվեց 11 մլն դոլար: Ինչպես նախորդ մի քանի, այնպես էլ այս տարվա հեռուստանարաքոնի գումարները տրամադրվելու են Լեռնային Ղարաբաղի ողնաշարը համարվող «Հյուսիս-հարավ» ավտոմայրություն շինարարությանը: 160 կմ-անոց ավտոմայրություն շինարարությունն ավարտելուն պակասում էր 12,5 միլիոն: 1,5 միլիոն «պակասորդը» լրացրեց մեր ժամանակների հայ բարերարներից թըռք թըռքորյանը:

«Հեռուստանարաքոն-2004»-ին ամենամեծ հանգանակությունն արեց մեկ այլ մեծ հայրենասեր, բարերար Լոյկ-Սիմոն Մանուկյանը՝ 2 մլն դոլար: Լոյկ-Սիմոնը 1 մլն դոլարի խոստում էր տվել եւ խոստացել, որ 9 մլն հանգանական հետքում կավելացնի եւս 1 մլն: Էղուարդ էռնելյան Արգենտինայից նվիրաբերել է 1,5 մլն, Հրայր եւ Գեւորգ Հովհաններն ու Սարգիս Հակոբյանը՝ 1-ական միլիոն: Ժերար Գաֆենճյանը եւ Քարոլին Մուգարը նվիրաբերել են կես միլիոնական, իսկ Համաշխարհյան հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը՝ 250 հազար ԱՄՆ դոլար:

Հեռուստանարաքոններ կազմակերպում են 1996 թ. ի վեր: Հենց առաջին տարուն հանգանակվեց ամենախոչըն գումարը՝ 12 մլն: Իրականում հեռուստանարաքոնում հանգանակվել էր 6 մլն, սակայն հաճելի անակնկալ մատուցեց թըռք թըռքորյանը՝ կրկնապատկելով հավաքված գումարը:

Փաստորեն, իրականացավ «Հայաստան» համահայկական իիմնադրամի գործադիր տնօրեն Նահիրա Մելքոնյանի կանխատեսումը: Զիրապարակելու պայմանով մեզ հետ զրուցում Մելքոնյանն ասել էր, որ այս հեռուստանարաքոնի ընթացքում 6 հայորդիներ կնվիրաբերեն 1-ական մլն դոլար, «ինչը հնարավորություն կտա «Զարդելու» «Հյուսիս-հարավ» ավտոմայրությունը մեջքը»:

10-րդ հեռուստանարաքոնը ռեկորդային էր ոչ միայն ընդհանուր հանգանակված գումարով: Այսպես,

Հայաստանում եւ Արցախում հանգանակվեց ավելի քան 1 մլն դոլար: Ուեկորդային էր նաև Ֆրանսիայում մի քանի օր առաջ անցկացված հեռախոսամարաքոնի արդյունքը՝ ավելի քան 1 մլն դոլար: Նոյեմբերի 22-ին երկրորդ անգամ Հայաստանում անցկացվեց հեռախոսամարաքոն, որի ընթացքում հավաքվեց 15 մլն դրամ, ինչն, անշուշտ, մեծ գումար չէ, սակայն ցույց է տալիս, որ Հայաստանում եւս մարդիկ սովորում են փող հանգանակել:

Հեռուստանարաքոնը ոչ միայն պարզ դրամահավաք է, այլև, ավելի շուտ, ազգահավաք, հայրենասիրական միջոցառում: Մի քանի ժամում աշխարհասկյուռ հայությունը հնարավորություն ունեցավ մինչանց հետ հաղորդակցվելու, տեսնելու սեփական աշքերով Արցախի զարգացումը: Այս հեռուստանարաքոնը քարոզչական առումով բավականին լավ էր կազմակերպված: Հեռուստատեսությամբ շաբաթներ շարունակ պատմվում էր հայ բարերարների մասին՝ սկսած Ներսես կարողիկոսից մինչեւ Ալեքսանդր Մանթաշյանց: «Մի մերժեք ձեր պարտքերն առ հայրենիք», հայ մեծ բարերար Մանթաշյանցի այս խոսքերը, որ ժամանակին նա դիմել էր հայ գործարարներին, դարձել էին «Հեռուստանարաքոն-2004»-ի կարգախոսը:

Հաջորդ տարում ամենայն հավանականությամբ կավարտվի «Հյուսիս-հարավ» ավտոմայրությունը շինարարությունը, ինչը հնարավորություն կտա բարձրակարգ ճանապարհով Կրցախի շրջանները կապելու մինչանց եւ կրկին հանայն հայության հանգանակած գումարներով կառուցած Գորիս-Ստեփանակերտ ավտոմայրությունը Հայաստանին:

Մինչ այսօր անցկացված 9 հեռուստանարաքոնների ընթացքում հանգանակվել է շուրջ 50 մլն դոլար, այդ գումարներն ուղղվել են Գորիս-Ստեփանակերտ եւ «Հյուսիս-հարավ» ավտոմայրություններին: Նշենք մեր առատածեռն բարերարներից մի քանիսի անունները թըռք թըռքորյան, Ալեք, Ռիշարդ եւ Լոյկ-Սիմոն Մանուկյաններ, Հրայր եւ Գեւորգ Հովհաններ, Էղուարդ էռնելյան, Սարգիս Հակոբյան, Ալբերտ, Ռոբերտ եւ Ժողովայաններ, Վարուժաններ, Կարուժան Բուլմայան, Ժերար Գաֆեսճյան, Տիգրան Իզմիրյան:

**ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՏՎԵԼ «ԼՂՀ 2005 Թ.
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻՆ**

ՍԵՓՈԱԿԵՐԸ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԼՂՀ կառավարության նոյեմբերի 29-ի նիստում հավանություն տրվել «ԼՂՀ 2005 թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծին, որը սահմանված կարգով ներկայացվելու է Ազգային ժողովի քննարկմանը: Ըստ ԼՂՀ վարչապետ Անուշավան Ղանիելյանի, 2005 թ. պետրութեն լայնածավալ նոր ծրագրերի իրականացման սկիզբ է հանդիսանալու: Նրա խոսքերով, 2003-2004 թթ. եկամուտների եւ տնտեսական աճի բարձր տեմպերի պահպանումն անվերապահութեն կրերի բնակչության եկամուտների, ինչպես նաև ժողովրդի ընդհանուր կենսամակարդակի բարձրացմանը:

ԼՂՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Սպարտակ Թելուսյանը նշել է, որ 2005թ.-ի բյուջեն կֆինանսավորվի 100%-ով: Բյուջեի եկամուտները կկազմեն 6 մլրդ 460 մլն դրամ, իսկ ծախսերը՝ 21 մլրդ 325 մլն դրամ: Նշվեց, որ

Հոգու Կիելաբարախաթերք

2004-ի բյուջեի ծախսերը կազմել է ին 15 մլրդ 249 մլն 140 հազ. դրամ: 2005 թ. բյուջեի դեֆիցիտը կվազմի 14 մլրդ 865 մլն դրամ, իսկ Հայաստանի կողմից՝ ԼՂՀ-ին տրամադրվող ճիշճետական վարկը՝ 13 մլրդ 636 մլն 600 հազ. դրամ: Նախարարի կարծիքով, 2005 թ. բյուջեն է կրնականում կրնենա սոցիալական ուղղվածություն: Մասնավորապես, 2005 թ. ուսուցիչների աշխատավարձը կամ 65%-ով, իսկ առողջապահության համակարգի աշխատողներինը՝ 39%-ով: Կրաքարանա նաեւ մշակութային ոլորտի աշխատողների աշխատավարձը: Նիստում կառավարությունը հավանություն է տվել նաեւ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ԼՂՀ օրենքի նախագիծին, ըստ որի նվազագույն այն սահմանվելու է 15 հազ. դրամ (մոտ 30 ԱՄՆ դոլար): Մեկ այլ որոշմամբ, հաշմանդաւ եւ երկողմանի ծնողագուրկ երեխաներին տրվող ամենամյա պետական նպաստները սահմանվեցին 6 հազարական դրամ՝ նախորդ տարվա, համապատասխանաբար, 3 հազ. դրամի եւ 2 հազ. դրամի դիմաց:

Ինչպես «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ»-ին հայտնեցին ԼՂՀ արտաքին գործերի նախարարության տեղեկատվական եւ վերլուծական վարչությունից, նիստում հաստատվել է նաեւ հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2005 թ. տարեկան ծրագիրը:

Աշակութային

Արտակ Վ. Վարդանյան

Արտակ
Վարդանի
Վարդանյանը ծնվել
է 1951 թ. մայիսի 4-
ին, Նախիջևանի
Ազնաբերդ
գյուղում: 1957 թ.
ընդունվել է իր
ծննդավայրի
միջնակարգ
դպրոցը, որի 8-րդ դասարանն ավարտելուց հետո՝
1965-ին, տեղափոխվել է Երևան:



1968-ին ավարտել է Երևանի թիվ 5 միջնակարգ դպրոցը & մույն թվականին ընդունվել Երևանի պետական ճարտարագիտական համալսարանի տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետը: Այն ավարտել է 1973-ին, իսկ 1988-ին՝ մույն համալսարանի հասարակական մասնագիտությունների ֆակուլտետի լրագրության բաժինը:

1973-1994 թթ. նշանակումով աշխատել է Երևանի մաքեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես ճարտարագետ: Աշխատանքին զուգահեռ զբաղվել է բարերազմությամբ, բանահավաքությամբ, ազգագրությամբ, լրագրությամբ:

1978 թվականից համագործակցում է ՀՀ ԳԱԱ Դր. Ածառյանի անվան լեզվաբանության

ինստիտուտի հետ: 2004թ. «Հայոց լեզու» մասնագիտությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Հայաստանի լրագրողների միության անդամ է 1994-ից:

1994-ից առ այսօր աշխատում է Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմում, 1999-ից՝ որպես արձանագրային բաժնի վարիչ:

Նեղինակ է հայ բարբառագիտությանը, ազգագրությանը, բանահյուսությանը նվիրված շուրջ մեկ տասնյակ գիտական հոդվածների, հարյուրավոր հրապարակախոսական, գիտահանրամատչելի հոդվածների, հոդվածաշարերի, գրական ստեղծագործությունների: Նեղինակ է վեց գրքի՝ «Իմ կարուտները» բանաստեղծական ժողովածուի (2000), «Ազնաբերդ. նախիջ&անահյության վերջին ամրոցը» պատմաբանասիրական ուսումնասիրության (2000), «Նժդեհյան մասունքներ» հուշապատճան (2001), «Ալ խնձորիկ» (1993), «Կաքավիկ» (2004) մանկական բանահյուսական ժողովածուների & «Վայոց ծորի միջրարրառը» մեմագրության (2004):

1996-98թթ. Երեխ է «Ասիխիջ&ան» հայրենակցական միության նախագահը:

Դպրոցական տարիներից, իրանի ռադիոյի հաղորդումների միջոցով, տարվել է պարսկերենով & իրանական մշակությով: Նետագյուղում ինքնուրույն սովորել է պարսկերեն & որոշ հաջողության հասել: Նրապարակել է իրանական մշակույթին, հայ-իրանական բարեկամությանը նվիրված հոդվածներ, երկու ժողովուրդների բարեկամությանը և նվիրել նա & «Նովրուզի ծաղիկ» բանաստեղծական շարքը:



ՎԻՇԱՊԱՍԱՐ

Ավանդագրույցներ

ՎԻՇԱՊԱՍԱՐ

Ներու-հեռավոր ժամանակներում,
Երբ աշխարհավեր, ամենակործան
Զրիեղեղն էր ողջ աշխարհը բռնել,
Երբ Աստված իր խոլ, ահեղ զայրույթի

Հոգևոր պատմութերք

Քեղեղն էր թափում թշվառ մարդկության
Սեղսավոր գլխին,
Երբ Աստծու կանք
Նոյ նահապետը հսկա տապանով
Լողում էր դեպի Լեռը փրկության,
Գիշերվա կեսին
Նոր դղրդյունով նավը համակվեց.
Տապանը ցնցվեց՝
Բախվելով ժայռոտ լեռնագագաթի:

Եվ նահապետը՝ քնից արթնացած,
Սաստիկ վրդովկեց & հույժ անիծեց
Լեռը չարագույժ,
Որ փրկվող կյանքի սերմերը կրող
Տապանն էր ջարդում.
«Աճիձվես, և ասաց, և թող օձեր ապրեն
Աճուր, անպտուղ քո լերկ ժայռերին»:
Եվ խիստ անեծքից լեռը երկփեղվեց,
Դարձավ երախը բաց արած վիշապ...

... Անցել են բազում-բազում տարիներ,
Գողբան աշխարհի մով մատուցներում
Մի լեռ է կանգնած՝ հանց հսկա վիշապ,
Օձասարն է նա,
Որ Վիշապասար & Աժդանական
Անուններով դարերով անցել.
Նրա լանջերին գարունն է փոռում թավշագործ կանաչ,
Իսկ լերկ գագաթ սուրսայր ժայռերին
Ամռան օձեր են վխտում ու խայտում՝
Որպես հեռավոր Նոյյան նզովքի
Վերիուշ-վկաներ...
2002, հունվար

ՍԵՄԻ ԱՂԲՅՈՒՐԸ

Նոյ նահապետը իջել էր արդեն
Սրբացած լեռան ամպոտ լանջերից
Դաշտուն այն ընդարձակ,
Որ Նախիջ&ան անունով օծվեց
Փրկության պատվին:

Տնկել էր ուզում նահապետը ծեր
Խաղողի փրկված որթերը մատղաց
Դաշտում Շարուրի,
Երբ իջեց հանկարծ,
Որ տեղն է անցուր,
Որ աղյուրները լեռներից բխող
Հեռու են այնքան:

և Մի՛ մտահոգվիր, ծնո՛ղ պատվելի, և
Սեմն էր՝ առաջնեկ ժառանգը Նոյի, և
Կրերեմ ջուրը սեզ բարձունքների,
Եվ մեր աշխարհում
Կրկին կփթթի այգին խաղողիդ:

Եվ որդին Նոյյան՝
Եղբայրների հետ,
Քառասուն օրվա
Զանք ու քրտինքով
Ժայռաբուխ ջուրը ջինջ ու անապակ

Բերեց նորատունկ ագարակը հոր...

Այսօր էլ այնտեղ՝
Շարուր-Նախճավան սահմանագլխին,
Ագարակ կոչվող գեղջի բարձունքին,
ճերմակ քարերից աղբյուր է բխում
Զրով իր վարար, սառն ու նշահամ
Եվ Սեմի աղյուր անունն է կրում...
2003, փետրվար

«ՀԱՐՍ ՈՒ ՓԵՍՍ»

Ասում են վաղուց, մի ջինջ օր գարնան
Վայոց լեռներում մի հարսանիք կար,
Սիրուն էր հարսը, & փեսան էր քաշ,
Հարսանքավորին տեղ-դադար չկար:

Չուռնա-դիլով, շուրջպարով ուրախ
Թափորն էր իջնում դեպի Նախճավան,
Երբ հանկարծ հանց հողմ՝ թշնամին վայրի
Մեկն օլակեց անգեն ամբոխին:

և Կամ հարսին տվեք, կամ կկոտորենք, և
Մի թուրք որոտաց լեռան գագաթից:
Իսկոյն քաջերը առաջ նետվեցին,
Որ բազկով փրկեն պատիվը գյուղի:

Լաց ու շիվանով ս&ազգեստ մի կին
Զեռքերը պարզած դիմեց երկնքին.
«Գրա մեզ, Աստված, ու մեր զավակաց,
Կամ ջուր դարձրու մեզ, կամ հող, կամ էլ քար»:

Այրու աղոթքին լուր անսաց Աստված.
Ահել ու ջահել, կին, թե երեխա
Քար դարձան մեկեն իր հրամանով՝
Ավագակմերին սարսափ պատելով...

...Եվ մինչ& իիմա կանգնած է էլի
Շավերծ քար կտրած այն հարսանիքը՝
Իր հարս-փեսայով, երաժիշտներով,
Հարսանքավորի քարեղեն պարով:

Եվ պատգամում են անցնող-դարձողին
Քար հայացքներով քարացած նարդիկ՝
Ով սարսափում է դժնի թշնամուց,
Ժայռաբեկոր է առհավետ դառնում...
2002, փետրվար

